ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 242 – Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2026 թվականի հունվարի 13-ի N 9-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2026 թվականի նոյեմբերի 10-ին կայացած նիստի N 12 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 60 /վաթսուն/ քաղաքացիների՝ սոցիալական աջակցության նպատակով, հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 3 030 000 /երեք միլիոն երեսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-11-11 09:19:13 GMT+4

2026թ. նոյեմբերի 11
ք.Իջևան